## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

## ԿԱՐԾԻՔ

Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի Ի.Գ.00.02 - "Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ" մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված "Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով" վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված հետազոտության արդիականությունը պայմանավորված է ԵՄ-ի անդամ-պետությունների անջատողականության հիմնախնդիրների և, մասնավորապես, Կատալոնիայի անջատողականության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրմամբ:

Անջատողկանությունը հաճախ հանդես է գալիս որպես միջպետական և ազգամիջյան սուր հակամարտությունների աղբյուր: Միևնույն ժամանակ, անհնար է անտեսել այն հանգամանքը, որ անջատողականության պատճառները բավականին հաճախ կապված են մարդու, ժողովուրդների, ազգային, ռասայական և կրոնական խմբերի (փոքրամասնությունների) հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների հետ: Անջատողականությունն այսօր բազմաթիվ բարդ և սուր խնդիրներ է ստեղծում ինչպես զարգացած (Կանադա, Իսպանիա և այլն), այնպես էլ զարգացող (Հնդկաստան, Պակիստան, Իրաք, աֆրիկյան մի շարք պետություններ) երկրներում՝ իր դերը խաղալով նաև ԽՍՀՄ-ի, նախկին Հարավսլավիայի և Չեխոսլովակիայի փլուզման գործում:

Հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված հիմնական խնդիրները, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել անջատողականության առաջացման պատճառների ու դրան նպաստող գործոնների բացահայտումը, ԵՄ-ում անջատողական շարժումների հիմնական տիպերի վերհանումը, անջատողականության քաղաքական ու իրավական մեկնաբանությունների առանձնահատկությունների պարզումը, Իսպանիայի կենտրոնական իշխանությունների և ազգային ինքնավար համայնքների ինստիտուցիոնալ հարաբերությունների խնդրիների վերհանումը և այլն:

Ողջունելի է, որ հեղինակը կիրառում է մաթեմատիկական մոդելավորման, մասնավորապես՝ խաղերի տեսության մեթոդը Իսպանիայի կենտրոնական իշխանությունների և Կատալոնիայի հարաբերությունների վարքաբանական խնդրիների վերլուծության համար: Անհրաժեշտ է առանձնացնել նաև հեղինակի կողմից նեոֆունկցիոնալիզմի, լիբերալ միջկառավարականության, նոր ինստիտուցիոնալիզմի և այլ

տեսությունների կիրառումը անջատողականության հիմնախնդիրների վերհանման գործում՝ ԵՄ ինտերգացիոն գործընթացների համատեքստում: ԵՄ-ի քաղաքական համակարգի շրջանակներում հետազոտվել է Կատալոնիայի ինքնավարության իրավասություններին վերաբերող հիմնահարցերը, ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտների ունեցած քաղաքական դերակատարությանը վերաբերող խնդիրները: Ուշագրավ է, որ ատենախոսը, հետազոտելով ԵՄ-ի ինտեգրացիոն մի շարք տեսություններ, հանգել է այն եզրակացությանը, որ ԵՄ-ի ինտեգրացիոն գործընթացները նպաստում են Կատալոնիայի քաղաքական ինքնուրույնության մեծացմանը, որն էլ անուղղակիորեն նպաստում է Կատալոնիայի անջատողականությանը:

Աշխատանքն առանձնանում է գրագետ ակադեմիական լեզվով ու հստակ՝ խնդիրների լուծմանը նպաստող կառուցվածքով:

Միաժամանակ, Ռ. Ավետիսյանի կողմից պաշտպանության ներկայացված "Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով" վերտառությամբ աշխատանքն առանձնանում է մի շարք թերություններով ու բացթողումներով: Մասնավորապես՝

1. Որպես հետազոտության օբյեկտ հեղինակը նշում է "անջատողականության հիմնախնդրի քաղաքական չափումների ուսումնասիրումը", մինչդեռ հայտնի է, որ որևէ բանի ուսումնասիրում, հետազոտում չի կարող օբյեկտ հանդիսանալ, քանի որ հետազոտության օբյեկտը գոյություն ունի հետազոտողից անկախ: Թերևս, սա կարելի է դասել մեթոդաբանական սխալների շարքին:
2. "Թեմայի գիտական մշակվածության աստիճանը" բաժնում հեղինակը որպես ԵՄ ներքաղաքական կյանքի առանձնահատկություններին նվիրված հետազոտություն առանձնացնում է "Եվրոպագիտության հիմունքներ" ուսումնական ձեռնարկը (էջ 7), ինչն անթույլատրելի է ատենախոսական հետազոտության համար:
3. Ատենախոսության մեջ Արցախյան հիմնախնդրին անդրադարձը կրում է զուտ ֆորմալ բնույթ, թեև թեմայի կարևորության մասին Արցախյան հիմնախնդրի կարգավորման համատեքստում հեղինակը գրում է ներածության մեջ: Նա, մասնավորապես, ընդգծում է, որ "թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Ղարաբաղյան հիմնախնդրի ուսումնասիրմամբ, քանի որ հաճախ, խեղաթյուրելով իրականությունը, Արցախյան շարժումը ներկայացվում է որպես անջատողական..." (էջ 5): Հեղինակի այս պնդումը օբյեկտիվ է, հատկապես հաշվի առնելով Արցախյան հիմնախնդիրը remedial

secession կոնցեպտի կիրառմամբ ուսումնասիրելու որոշ հեղինակների ձգտումը: Սակայն ակնհայտ է, որ ատենախոսության մեջ Արցախյան հիմնախնդրին ընդամենը 1,5 էջ նվիրելը (էջ 43-44) չի կարող տալ որևէ հարցի պատասխան կամ հիմնավորել հեղինակի դիրքորոշումը: Ուստի, անհրաժեշտ էր կամ հավուր պատշաճի բացել խնդիրը կամ ընդհանրապես խուսափել դրան անդրադարձ կատարելուց: Այլապես իմաստազրկվում է նաև հեղինակի այն պնդումը, որ "ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական և քաղաքական իրողությունների խեղաթյուրման կանխման և Հայաստանի արտաքին քաղաքականության հետագա քայլերի մշակման համար" (էջ 13):

4. Մաթեմատիկական մոդելավորման մեթոդի, մասնավորապես՝ խաղերի տեսության կիրառումը Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները վերհանելու նպատակով, անշուշտ, ողջունելի է, սակայն 2.2-ի մեծ մասը (էջ 65-72) խաղերի տեսության էությանը, դրա տեսաբանական հիմքերի ներկայացմանը նվիրելը չի կարող արդարացված լինել: Շարադրված նյութը կրում է առավելապես դասագրքային բնույթ և չի նպատակում հետազոտության իրականացմանը:

5. Հետազոտության խնդիրների շարքում հեղինակը նշում է. "Մշակել Կատալոնիայի անջատողականության հակամարտության վերլուծության նոր ռազմավարություն": Մինչդեռ ինչում է մասնավորապես կայանում այդ "նոր ռազմավարությունը", հեղինակը չի նշում: Առավել ևս այդ ռազմավարությունը արտացոլված չէ եզրակացություններում: Եթե խոսքը մաթեմաթիկական մոդելավորման, խաղերի տեսության կամ էլ նեոֆունկցիոնալիզմի, ինստիտուցիոնալիզմի և այլ տեսությունների կիրառման միջոցով տվյալ քեյսի վերլուծության մասին է, ապա դժվար թե դա կարելի է "նոր ռազմավարություն" համարել: Հեղինակն ընդամենը կիրառել է հայտնի մեթոդները կամ հիմնվել հայտնի տեսաբանական մոտեցումների վրա: Առհասարակ, ցանկացած ատենախոսական հետազոտություն պետք է հավակնի այսպես կոչված "վերլուծության նոր ռազմավարություն" առաջարկելուն, և կարիք չկա դա ներկայացնել որպես հետազոտության առանձին խնդիր:

6. Իսպանիայի կենտրոնական իշխանության և ինքնավար համայնքների ինստիտուցիանալ փոխհարաբերությունները վերլուծելիս՝ հեղինակը հղում է անում Իսպանիայի սահմանադրության 151 և 143 հոդվածների վրա՝ որպես դրանց հիմնական տարբերություն նշելով բացառապես անջատման ընթացակարգի տևողությունը: Մինչդեռ անհրաժեշտ էր ավելի հանգամանորեն մոտենալ նշված սահմանադրական հոդվածների էությանը, ներկայացնել ընթացակարգերի բովանդակային տարբերությունը, նշել, թե լիազորությունների ինչ փաթեթ է սահմանված յուրաքանչյուր հոդվածով:

7. Հեղինակի պնդումն առ այն, որ "երկու համաշխարհային պատերազմների հիմնական պատճառները իդիդենտական պահանջներն են եղել, մասնավորապես՝ Գերմանիայի տարածքային պահանջները Լեհաստանի և Չեխոսլովակիայի նկատմամբ" համարում ենք խիստ միակողմանի (էջ 48): Նման պնդումներ անելով՝ հեղինակն ատենեսում է համաշխարհային պատերազմների բազմաշերտ ու բարդ էությունը՝ իր բոլոր աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական բաղադրիչներով:
8. Մշակութային ինտեգրման խնդիրները ներկայացնելով՝ հեղինակը բերում է Չեխոսլովակիայի օրինակը՝ ընդգծելով, սակայն, Չեխիայի ու Սլովակիայի առավելապես տնտեսական տարբերությունները: Ընդ որում, որպես "ակտիվացմանը նպաստող գործոն" հեղինակը դիտարկում է Չեխիայի ինդուստրիալացումն ու Սլովակիայի՝ ագրարային միավոր մնալու հանգամանքները: Այսպիսով, մշակութային ինտեգրման խնդիրների վերլուծության համար ընտրելով Չեխոսլովակիայի օրինակը՝ հեղինակը հակասում է ինքն իրեն:
9. Հեղինակը բազմիցս որակում է անջատողականությունը որպես դիսֆունկցիոնալ գործընթաց, ինչը դժգար է կոռեկտ համարել: Դիսֆունկցիան որևէ գործառույթի կամ չկատարումն է կամ էլ ոչ պատշաճ կատարումը: Անջատում նախաձեռնող կողմը ապրիորի դիսֆունկցիոնալ չէ, քանի որ կատարում է իր հանար սահմանված գործառույթը: Այն կարող է դիսֆունկցիոնալ որակվել բացառապես կենտրոնական իշխանությունների տեսանկյունից: Սակայն մի՞թե այս դեպքում հեղինակի կողմից տվյալ եզրույթի կիրառումը չի հակասում գիտական օբյեկտիվության սկզբունքին: Հետազոտվող խնդրի համատեքստում նպատակահարմար կլիներ կիրառել, օրինակ, *դեզինտեգրացիոն* եզրույթը:
10. Ատենախոսության գրականության ցանկն առանձնանում է լուրջ թերություններով, մասնավորապես, "Գիտական հոդվածներ" բաժնում կարող ենք տեսնել այնպիսի հղումներ, ինչպես, օրինակ, Օքսֆորդի և Քեմբրիջի առցանց բառարանները, Իսպանիայի սահմանադրությունը, Շումանի հռչակագիրը և այլն: "Գիտական հոդվածներ" բաժնում են ներկայացված նաև զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումները: Անհրաժեշտ էր առանձին բաժիններով ներկայացնել պաշտոնական ու տեղեկատվական նյութերը:
11. Էջեր 73-75-ում հեղինակը հղում է անում նկարների վրա, սակայն չի նշում, որ դրանք ներկայացված են "Հավելված" բաժնում: Միաժամանակ, "Հավելված" բաժնի էջերը ներկայացված են որպես ատենախոսության ընդհանուր ծավալի մաս, մինչդեռ հայտնի է, որ ըստ ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված ատենախոսության ձևավորման պահանջների՝ հավելվածները չեն ներառվում ատենախոսության ընդհանուր ծավալի մեջ և չեն էջակալվում:

Այսպիսով, Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի "Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով" վերտառությամբ ատենախոսությունն ունի էական խմբագրական աշխատանքի կարիք, որի կատարման և հրապարակային պաշտպանության ժամանակ աշխատանքում տեղ գտած վիճահարույց դրույթների հիմնավորման պարագայում հեղինակը կարող է հավակնել քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԻԳ.00.02 - "Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ" մասնագիտությամբ:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

Քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Հայ-Ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր

Վահե Դավթյան

*Պաշտոնական ընդդիմախոս քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ, ՀՌՀ պրոֆեսոր Վահե Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ՝*

**Հայ-Ռուսական համալսարանի գիտական քարտուղար՝**

**Բ.գ.թ. Ռ. Կասաբաբովա**

ք. Երևան

*05.09.2022 թ.*